

29



« մշակույթի նախարարի
2012թ. N 574 հրամանի

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՐՎԵՍՏԻ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) ժամանակակից արվեստի վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) Աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանում է:

2. Վարչությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերով, Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումներով և սույն կանոնադրությամբ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարի (այսուհետ՝ Նախարարի) հրամաններով:

3. Վարչությանը կազմավորում, վերակազմակերպում և նրա գործունեությունը դադարեցնում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

4. Վարչության կանոնադրությունը, կառուցվածքը հաստատում /փոփոխում/ է Նախարարը:

5. Վարչությունը ղեկավարում է վարչության պետը:

II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

6. Վարչության խնդիրներն են.

1) նպաստել ժամանակակից արվեստի պահպանմանը, զարգացմանը և տարածմանը, նոր ծրագրերի, նոր գաղափարների իրականացմանը.

2) ժամանակակից արվեստի բնագավառում պետական մշակութային քաղաքականության նպատակների և առաջնային ուղղությունների մշակումը և իրականացումը.

3) ժամանակակից արվեստի բնագավառում իրականացվող քաղաքականության վերլուծությունը, միտումների և օրինաչափությունների ուսումնասիրումը, ռազմավարության, հայեցակարգերի և նպատակային ծրագրերի մշակումը և իրականացումը:

III ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

7. Վարչությունն իր խնդիրներին համապատասխան իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) իր իրավասությունների սահմաններում մասնակցում է օրենսդրական և այլ նորմատիվ իրավական ակտերի նախագծերի մշակմանը, Նախարարին և Աշխատակազմի ղեկավարին ներկայացնում է առաջարկություններ արվեստի բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրության կատարելագործման վերաբերյալ,

2) պետական մշակութային քաղաքականության իրականացման նպատակով համակարգում է Նախարարության ենթակայության ՊՈԱԿ-ների, թատերահամերգային կազմակերպությունների, կինոստուդիաների սոցիալ-տնտեսական զարգացման տարեկան, միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրերի մշակումը,

3) ուսումնասիրում և վերլուծում է Նախարարության ենթակայության թատերահամերգային կազմակերպությունների, կինոստուդիաների գործունեության հաշվետվությունները,

4) մշակում է հայեցակարգեր ու պետական նպատակային ծրագրեր ժամանակակից արվեստի բնագավառում,

5) իր իրավասությունների սահմաններում մասնակցում է պետական բյուջեի նախագծի մշակմանը,

6) Նախարարին և Աշխատակազմի ղեկավարին ներկայացնում է առաջարկություն թատերահամերգային կազմակերպություններում, համերգասրահներում և